

Ոսկեայ կանոնի մասին արտայայտուած են բազմաթիւ փիլիսոփաներ, որոնցմէ պիտի յիշեմ միայն Իմմանուէլ Կանտը (նկատի ունենալով ներկայ տեսութեան հետ անոր առնչութիւնը): Կանտ, իր երկերուն մէջ, ուղղակիօրէն կը հակաճառէ *ոսկեայ կանոնի* գաղափարին եւ կը մերժէ անոր «ընդհանուր օրէնք» ըլլալու կարելիութիւնը, որովհետեւ Կանտի համաձայն, այդտեղ կը պակսի անհատի պարտաւորութիւններու հիմքը՝ թէ՛ անհատը իր անձին հանդէպ եւ թէ՛ ուրիշներու հանդէպ:

Հակառակ բազմաթիւ քննադատութիւններուն, *ոսկեայ կանոնը* կարելի է նկատել մարդկային խոհեմութեան ուղղուած կոչ մը, որպէսզի անհատը խորհրդած իր վարմունքի առաւելութիւններուն ու թերութիւններուն մասին. կոչ մը՝ դէպի արդարութիւն եւ մարդկային արժանապատուութիւն: *Ոսկեայ կանոնը* կարելի է նկատել նաեւ կարելոր քայլ մը՝ մարդոց, դէպի բարոյականութիւն մատնանշող, անհատական պատասխանատուութեան: Անհատը կը փորձէ *ոսկեայ կանոնով*, այլ անհատի մը դրութեան մէջ մտնել եւ բարոյա-կան ճիշդ վարմունքը ընտրել կամ եթէ ինք, անձամբ, բարոյական խոտոր ու վատ ուղիի մը մէջ գտնուի, կրնայ *ոսկեայ կանոնով*՝ իր իրավիճակը ուղղել եւ ճիշդը ընտրել:



Անպայմանական Հրամայականը

կամ

Բարոյական Օրէնքը

Իմմանուէլ Կանտ, ինչպէս յիշեցինք, բարոյագիտութիւնը կը հիմնէ հիմնական սկզբունքի մը վրայ, զոր կը կոչէ՝ *անպայմանական հրամայական* (Categorical Imperative), հետեւեալ բանաձեւով.-

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ), որով միաժամանակ կարենաս ցանկալ, որ այդ՝ ընդհանուր օրէնք դառնայ»:

Կանտ, այս սկզբունքը կը ներկայացնէ մանրամասնօրէն, իր բարոյականութեան մասին գրած երեք գլխաւոր երկերուն մէջ.-

- «*Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան*» (1785, գերմ. բնագիր՝ „Grundlegung zur Metaphysik der Sitten“, անգլ.՝ „Groundwork of the metaphysics of morals“),
- «*Քննադատութիւն՝ գործնական բանականութեան*» (1788, գերմ. բնագիր՝ „Kritik der praktischen Vernunft“, անգլ.՝ „Critique of practical reason“) եւ
- «*Բարոյականութեան բնագանցութիւնը*» (1797 թ., գերմ.՝ „Metaphysik der Sitten“, անգլ.՝ „The metaphysics of morals“):

Կանտի համաձայն, *անպայմանական հրամայականի* հասկացութիւնը, եթէ